Չէ իւրեանց արք եպիսկոպոս մի և տացեն նմայ նամակ փոխանորդութեան իւրեանց ժամանակաւ երիս ամաւ պաշտօն տանուտէրութեան 'ի տանն Հայոց և սա ունիցի ձայնս երկուս։

Օրինակ փոխանորդութեան Հայրապետին Հայոց։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Մարտիրոս Քահանայապետ և ծայրագոյն Հայրապետ ամենայն Հայոց ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեաց ընդհանիւր Եպիսկոպոսեօք միաբան ընտրեցաք եղբայրակիցս մեր Տեառն Սեղբեստրոս արքեպիսկոպոս աղձնու, և ետուք իշխանութիւն նմայ փոխանորդութեան մերոյ երիս ամաւ ժամանակաւ, զի բազմեսցի փառօք և պատուօք ընդ փառաւոր տանուտէրս 'ի գահն մեծ և բարեվարք տանն հայոց, ազատապէս, և տացէ պաշտօն ընդունեսցի յօրէնս կարգադրութեան, և արասցէ հրաման ըստ Օրինօք հայոց 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ յերեսս երկրի հայաստանեաց, և զամենայն զոր ինչ հրաման 'ի գահէն մեծ և բարեվարք տանէն հայոց հանդերձ փոխանորդաւ մերով Տեառն Սեղբեստրոս արք եպիսկոպոսիւ ձեռնադրեալ ելցէ ընդունելի մեզ լիցի, և համարեսցի իբրև կամք